ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 13.01.2023Թ. ԹԻՎ 2/5-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու» կարգում **(այսուհետ նաև՝ Կարգ)** փոփոխություն կատարելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 21-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.5 կետի 32-րդ ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել «Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու» կարգը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2 Ինկորպորացված Կարգը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

12 դեկտեմբերի 2024թ.
թիվ 19/12-Ա
ք. Երևան